«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր,կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Կոստանյան Թամարա

Ուսումնական հաստատություն՝ Պ. Սևակի անվ. հ. 123 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն …… 3

Գլուխ 1

Անձի, անհատի կյանքում կրթության և դաստիարակության դերն ու նշանակությունը

1.1 Որպես հասարակության լիարժեք անդամ ՝ դաստիարակության կարևորությունը անձի կյանքում ……..... 5

1.2 Դաստիարակությունն ու կրթությունը , որպես սերտ կապակցված օղակներ……..……..……..……9

1.3 Բնապահպանությունը կրթական ոլորտում……..……12

Գլուխ 2

Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր ……..……..……. 14

Եզրակացություն……..……19

Գրականության ցանկ……...……..…20

Ներածություն

Թեմայի արդիականությունը.

Կրթությունը և դաստիարակությունը մանկավարժական գիտությունների համակարգի կարևոր բաղադրատարրերից են: Դրանք ուսումնասիրում և ընգծում են կրթության և դաստիարակության կարևորությունն ու անհրաժեշտությունը անհատի կյանքում, ինչպես նաև անձի ճիշտ և գրագետ զարգացման օրինաչափությունները: Կրթությունն ու դաստիարակությունը սերտորեն կապված և միմյանց լրացնող երկու օղակներ են. երկու կարևորագույն օղակներ, որոնց հիմքում ընկած է անձի ձևավորումը, որպես հասարակության լիիրավ անդամ: Դառնալ և լինել հասարակության « ներկայացուցիչ » նշանակում է տիրապետել և իմանալ բոլոր գործոններին ու կանոններին, որը կդարձնի քեզ ոչ միայն հասարակության այլ նաև արտաքին միջավայրի պահպանման և զարգացման արդյունավետ ու պիտանի անձ: Ի՞նչ ենք հասկանում ասելով լինել պիտանի անձ. կարևորել և առանձնացնել այն գործոնները, որոնք կնպաստեն արտաքին միջավայրի, առաջնահերթ, պահմանմանը, ինչպես նաև զարգացմանը, «օգնել», որպեսզի զարգացումը լինի ճիշտ և նպատակաուղղված: Բնապահպանությունը այսօր արդի համաշխարհային խնդիրներից է: Հաշվի առնելով շրջակա միջավայրը՝ կան որոշ բնապահպանական խնդիրներ, որոնց բախվում կամ կարող են հանդիպել կենդանի արարածները: Այս խնդիրների թվում է ավելորդ աղտոտվածությունը, օդի, հողի և ջրի աղտոտվածությունը լուրջ խնդիր է:

Բացի այդ, օզոնային շերտի քայքայումը, երկիր մոլորակի օրեցօր տաքանալը, քաղցկեղի նման կարևոր հիվանդությունների ավելացումը և բնական ռեսուրսների արագ սպառումը կենդանի էակների առջև ծառացած բնապահպանական խնդիրներն են:

Այսօր, Հայաստանի գլխավոր խնդիրներից մեկը նաև հանդիսանում է Սևանա լճի հիմնախնդիրը, որի շուրջ պետք է տանել լուրջ աշխատանքներ՝ պահպանելու համար Հայաստանի ամենագեղեցիկ և տեսարժան վայրերից մեկը: Հիմնվելով վերոհիշյալ նկատառումների վրա՝ սահմանեցինք աշխատանքի նպատակը:

Թեմայի նպատակը.

Թեմայի նպատակն է ընդգծել կրթության և դաստիարակության կարևորությունը յուրաքանչյուր անձի, անհատի կյանքում: ՈՒսումանսիրել և առանձնացնել բնապահպանական կարևորագույն խնդիրները, ինչպես նաև գտնել դրանց լուծման տարբերակները: Նշել անձի կարորությունը, որպես արտաքին միջավայրի գլխավոր, ազդող գործոն և առանձնացնել, դրանում կրթության և դաստիարակության դերը :

Գլուխ 1

Անձի, անհատի կյանքում կրթության և դաստիարակության դերն ու նշանակությունը.

1.1 Որպես հասարակության լիարժեք անդամ՝ դաստիարակության կարևորությունը անձի կյանքում:

Դաստիարակություն՝ որոշակի տեխնոլոգիաների համակարգ, որն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը: Հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար: Դաստիարակությունը համարվում է ուսումնական գործընթացի ոչ միայն բաղկացուցիչ մաս այլ անհրաժեշտություն ուսումնական գործընթացը նպատակային արդյունավետությամբ իրականացնելու համար: Դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի և դպրոցի համատեղ գործունեության ընթացքում, նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններում, հիմնարկություններում, մանկական, երիտասարդական, հասարակական կազմակերպություններում: Դաստիարակությունը հասարակական կյանքի համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է, որը սերտորեն կապված է ուսուցման հետ: Մեր օրերում՝ ներկա ժամանակներում, շատ հաճախ է խոսվում դաստիարկության մասին[5]:



Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակը մարդ կերտելու գործնթացն է, ոչ սոսկ իբրև ֆիզիկական գոյություն, այլ որպես բարոյական հատկանիշների ու առաքինությունների համախմբում:

Հասարակական դաստիարակության նպատակը, այն է, որ անձը կարողանա կիսել իր կարծիքը նաև հասարակության այլ անդամների հետ, ինչու ոչ նաև հաշվի առնել և ընդունել հասարակության հնչեցրած կարծիքներն ու տեսակետերը:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին[8]:

Դաստիարակությունը. դա գործնթաց է, որը ունի իր խնդիրները, նպատակները.

Դաստիարակության գործնթացը, ունի շատ բարդ կառուցվածք.

- Դաստիարակության նպատակի առկայություն, այդ նպատակին հասնելու համար համապատասխան խնդիրների, առաջադրում և լուծում.
- Դաստիարակության բովանդակությունը որը իր մեջ ընդգրկում է մեթոդները, հնարները միջոցները.
- Դաստիարակության գործընթացի արդյունավետությունը և արդյունքները:

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը: Դաստիարակչական համակարգի նպատակն է՝ օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին, բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի ունեցող երևույթներին, նպատակաուղղել երեխայի արժեքային համակարգի ձևավորումը, զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրող, յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ[3]:

Մաթեոս Մամուրյանը, ով հայտնի է, որպես հրապարակախոս, գրող, գրականագետ անդրադարձել է երեխայի դաստիարակության դերին , իսկ դաստիարակության հաջողությունը նա տեսնում էր երեխայի անձը ճանաչելու մեջ: Անդրադառնալով մանկան կերպարի ձևավորման գործում դաստիարակության դերին՝ Մ. Մամուրյանը նշում է «Չկա գործ մը, որ այնքան կշիռ ունենա, որքան դաստիարակությունը»: Բայց նա չի գերագնահատում դրա դերը, քանզի «Դաստիարակությունը իմացական կարողություններ չտար, չստեղծեր, այլ միայն դուրս կհաներ և կմարզեր», պետք է ճանաչել փոքրիկին և «դուրս հանել ու մարզել». բացահայտել հնարավորություններն ու կարողությունները, եթե ի վիճակի չեն բացահայտելու, ապա հանցանքը վատ դաստիարակությունն է, անկարող դաստիարակինը և ոչ ամենևին երեխայինը»:

Ծնողին հավասար Ղևոնդ Ալիշանը (ականավոր բանասեր, բանասեղծ, պատաբան) կարևորում է «երկրորդ ծնողի»՝ ուսուցչի դերը երեխայի անձը ձևավորելու, զարգացնելու և նրան դաստիարակելու գործում: Նա գտնում է, որ ուսուցիչը պետք է լինի կրթող, ուսուցանող, դաստիարակող, ունենա առարկայական պատրաստություն, մանկավարժական վարպետություն, ազնվություն, անաչառություն, պահանջկոտություն, համբերատարություն, սեր ու հոգատարություն երեխաների նկատմամբ: Պատահական չէ, որ Ղևոնդ Ալիշանի գիտական աշխատությունների հիմնական մասը դասագրքային նշանակություն են ունեցել: Այդ է պատճառը, որ մեր գրեթե բոլոր մեծերը. առանց բացառության Ղևոնդ Ալիշանի գովերգել են որպես խոշոր գիտնական և մանկավարժական գիտության նահապետի[1]:

Լավ անհատ, անձ ձևավորելու, դաստիարակելու կարևոր նախապայմաններից մեկը դա շրջակա միջավայրի հանդեպ սեր հաղորդելն է, խնամքով մոտեցումն է:

Երբ մենք բարկանում ենք երեխայի վրա , երբ նա թափում է խաղալիքները, բայց հաջորդ դեպքում դրսում աղբը գետնին գցելու ժամանակ անտարբեր լինում, դա արդեն իսկ խոսում է արտաքին և շրջակա միջավայրի հանդեպ սխալ դաստիարակության մասին:

Այսպիսով, դաստիարակելու գործընթացը պետք է տարածվի, ոչ միայն անձի << ես>>-ի զարգացման նպատակով, այլև հասարակության և շրջակա միջավայրի համար պիտանի անձ ձևավորելու համար[7]:

1.2 *Դաստիարակությունն ու կրթությունը , որպես սերտ կապակցված օղակներ:*

Առաջին ենթագլխում բավականին մանրամասն խոսեցինք անձի կյանքում դաստիարկության դերի և կարևորության մասին: Երբ արդեն երեխան սկսում է հաճախել դպրոց դաստիարակությունն ու կրթությունը, ինքնըստինքյան, դառնում են իրար համազոր երկու կողմեր : Չնայած նրան, որ մեր խոսքում, այդ շրջանում, գերակշռում է կրթություն բառը, սակայն լավ և ամուր կրթության հիմքում ընկած է, միանշանակ, դաստիարակությունը: Այնուամենայնիվ, կրթության դերը անձի կյանքում գտնվում է առաջատար շարքերում և այն հանդիսանում է հենք հետագայում ավելի ամուր կերպով առաջ շարժվելուն: Ի՞նչ ենք հասկանում ասելով կրթություն: Կրթությունը սովորելն ավելի դյուրին դարձնելու գործընթացն է, կամ գիտելիքի, հմտությունների, արժեքների, ավանդույթների և սովորությունների ձեռքբերումն է: Կրթական մեթոդները ներառում են պատմություն պատմելը, քննարկումը, սովորեցնելն ու մարզելը կամ հետազոտությունը[11]:Անձը, իր ամբողջ կյանքի ընթացքում անցնում է կրթական տարբեր մակարդակներով՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչև բարձրագույն կրթություն:



1.3 Բնապահպանությունը կրթական ոլորտում

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար: Բնապահպանական կրթության ծրագիրը սովորողների համար հանդիսանում է կոնկրետ մարմնավորում, որը էկոլոգիական դաստիարակության հետ կապված ուսումնական պրակտիկան է, որն իրականանում է դպրոցներում: Բացի ծրագրի բովանդակության հիմնական հասկացություններից և արժեքներից, ներկայիս մոդելը արժեքավորվում է նաև առաջնային գործունեությամբ՝ կրթական վիճակ, լավագույն փորձ, տեխնիկա, ձևեր, գործիքներ, արտադրական տեխնոլոգիաների առանձնահատկություններ:

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը

բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ :Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, դասավանդողի հետզրույցների, փաստերի, գործիչների կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ[10]:
Հատկանշական է նշել, որ ամբողջ ուսուցանվող տարիների ընթացքում ՝ նախադպրոցական կրթությունից մինչև բարձրագույն կրթություն, երեխաները ուսումնասիրում և զինվում են ոչ միայն ուսման այլև կյանքի որակի ապահովման համար անհրաժեշտ գիտելիքներով, որը վերբերում է շրջակա միջավայրի պահպանմանը ՝ բնապահպանությանը: Օրինակ, նախադպրոցական տարիքում՝ մանկապարտեզում, այդ ամենը երեխաներին ուսուցանվում է խաղային տարբերակով, որը իր մեջ ներառում է ոչ միայն դիդակտիկ խաղերը, այլև թերապևտիկ հեքիթները կամ ուղղակի ընթերցանության միջոցով բնության և դրա պահպանման մասին տեղեկատվության տրամադրմամբ և այն, հետագայում, քննարկման տարբերակով: Իսկ տարրական դասարներում երեխաները բնապահպանությանը և դրա գործառույթներին ծանոթանում են «Ես և շրջակա միջավայրը» առարկայի շրջանակներում: Տարրական դպրոցը ավարտելուն պես «Ես և շրջակա միջավայրը» առարկային գալիս է փոխարինելու «Բնագիտություն» առարկան , իսկ ավելի բաձր դասարաններում, արդեն, «Կենսաբանություն» առարկան: Այս ամենով ցանակնում ենք ընդգծել այն փաստը, որ անձը ՝ երեխան, իր կյանքի կրթական տարբեր փուլերում, մանրամասնորեն, ուսումնասիրում է բնությունը ՝ իր բոլոր գաղտիքներով, գեղեցկությամբ և իհարկե այն ճիշտ և գրագետ պահպանելու կանոնները[8]:

Գլուխ 2

Բնապահպամությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր

Բնապահպանությունը, երկիր մոլորակի բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման և ռացիոնալ օգտագործման չափերի ամբողջությունն է, ինչպես նաև ֆլորայի ու ֆաունայի բազմազանությունը, ընդերքի հարստությունը, ջրերի և մթնոլորտային օդի մաքրությունը։

Երկրի առանձին շրջաններում բնական միջավայրի անշրջելի փոփոխությունների վտանգը ավելի է ընդարձակվել մարդու տնտեսական գուծունեության մասշտաբների հետ մեկտեղ։ Բնապահպանության համաշխարհային միության տվյալներով (The World Conservation Union) 2008 թ. վերջին 500 տարում ամբողջովին բնաջնջվել են կենդանիների 844 տեսակ, իսկ կաթնասունների 23%-ը և թռչունների 16%-ը կանգնած են վերացման վտանգի առաջ։ 80-ականների սկզբին միջինում կենդանիները վերանում էին ամեն օր մեկ տեսակ /ենթատեսակ, իսկ բույսերը ամեն շաբաթ։ Ամեն տարի այրվում են համարյա 1 մլրդ. տոննա պայմանական վառելիք և մթնոլորտ են արտանետվում միլիոնավոր տոննա ծծմբի ածխածնի, ազոտի օքսիդներ, որոնց մի մասը հետ է վերադառնում թթվային անձրևների, մրի, մոխրի, փոշու։ Հողը և ջուրն աղտոտվում են արդյունաբերական և կենցաղային հոսքերի (հարյուրավոր միլիարդ տոննա), նավթամթերքների (մի քանի միլիոն տոննա), պարարտանյութերի (մոտ հարյուր միլիոն տոննա), պեստիցիդների, ծանր մետաղների, ռադիոակտիվ թափոնների միջոցով[6]։ Առկա է երկրի օզոնային շերտի քայքայման վտանգ։ Մթնոլորտի ինքնամաքրման կարողությունն արդեն մոտ է սահմանին։ Շրջակա միջավայրի անվերահսկելի փոփոխության վտանգը և դրա հետևանքով երկրի վրա կենդանի օրգանիզմների, այդ թվում և մարդու, գոյության վտանգը պահանջում էին բնության պահպանությանն ուղղված որոշակի չափանիշների մշակում՝ բնական ռեսուրսների ճիշտ օգտագործում։

Այս միջոցներին են դասվում անթափոն տեխնոլոգիաների մաքրման շինությունների ստեղծումը, պեստիցիդների օգտագործման կարգավորումը, թունաքիմիկատների արտադրության դադարեցումը, հողատարածքների բարելավում, ինչպես նաև պահպանվող տարածքների (ազգային պարկեր, արգելանոցներ), հազվագյուտ և անհետացող կենդանիների և բույսերի բուծման կենտրոնների (այդ թվում երկրի գենոֆոնդի պահպանում) ստեղծում, ազգային և համաշխարհային «Կարմիր գրքի» կազմում: Բնապահպանական միջոցները նախատեսված են հողային, անտառային, ջրային և այլ դաշնային օրենսդրություններում: Մի շարք երկրների պետական բնապահպանական ծրագրերի իրականացումը հնարավորություն է տալիս բարելավել շրջակա միջավայրի առանձին շրջանների որակը (օրինակ բազում տարիներ տևած և թանկ արժեք ունեցող մի ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր եղավ վերականգնել Մեծ լճերի ջրերի որակն ու մաքրությունը): Միջազգային մասշտաբով, միջազգային առանձին կազմակերպությունների ստեղծման հետ մեկտեղ, բնապահպանական առանձին խնդիրների վրա մեծ ազդեցություն ունի ՄԱԿ-ի ծրագիրը[11]:

Հայաստանը , այսօր, ևս գտնվում է բնապահպանական աղետի գոտում: Այսօր, մեր առաջատար բնապահպանական խնդիրներից մեկը Սևանա լճի պահպանումն է:

Սևանը Հայաստանի Հանրապետության միակ լիճն է, որը դասվում է խոշոր լճերի շարքին: Այն աշխարհի մեծ, բարձր-լեռնային, քաղցրահամ լճերից է: Այս երեք հատկանիշների միասնության պատճառով լիճը իսկապես հանդիսանում է տարածաշրջանի և մեր մոլորակի եզակի, ուշագրավ երևույթներից: Ցանկացած բնատարածքային համալիր իրենից ներկայացնում է բնության տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն:

Յուրաքանչյուր բաղադրիչի փոփոխություն հանգեցնում է մյուս բաղադրիչների՝ հետևաբար նաև ամբողջ համալիրի փոփոխությանը: Այդպիսի մի բնատարածքային համալիր է նաև Սևանա լիճը: Ջրի մակարդակի արհեստական իջեցումը հանգեցրել է մի շարք էկոլոգիական փոփոխությունների.

1.Լճի մակարդակի իջեցման հետևանքով իջել է նաև լիճ թափվող գետերի էրոզիայի բազիսը, ինչի հետևանքով մեծացել է գետերի քայքայիչ աշխատանքը և լճի հատակը լցվել է տիղմով:

2. Լճի մակարդակի իջեցման հետևանքով բարակել է լճի շերտի հաստությունը: այդ պատճառով Արեգակի ճառագայթները ափամերձ մասերով թափանցում են մինչև լճի խորքերը և տաքացնում են ջուրը: Դրա հետևանքով լճում սկսել են աճել կապտականաչ ջրիմուռներ, լիճը «ծաղկում» է, ինչը հանգեցնում է լճի ճահճացմանը և մահացմանը:

3. Վատացել են ձկների աճի և բազմացման պայմանները, փոփոխվել է նրանց քանակային և տեսակային կազմը:

4. Քանի որ կրճատվել է լճի հայելու մակերեսը, պակասել է գոլորշացող ջրի քանակը, փոխվել են լճի ավազանի միկրոկլիմայական պայմանները. Ամառը 1-2 աստիճանով ավելի շոգ է, ձմռանը՝ ավելի ցուրտ: այդ պատճառով լիճը ամեն տարի սառցակալում է:

5. Ցամաքել են շատ աղբյուրներ:

Ջրի մակարդակի իջեցումը նպաստավոր պայմաններ է ստեղծում լճի ճահճացման համար: Լճի ճահճացումը դանդաղեցնելու գործում մեծ դեր է խաղում նրա հատակին գտնվող 4C աստիճան հաստատուն ջերմաստիճան ունեցող ջրային շերտը: Այս շերտը թույլ չի տալիս, որ տիղմը խառնվի լճին, բայց, քանի որ, լճի ծավալը օրեցօր նվազում է, ապա խախտվում է նաեւ այս շերտի գործառույթները: Լճի տարածքում բացակայում են կառավարվող կենտրոնացած աղբավայրերը: Դրա հետեւանքով առաջացել են աղբի կուտակման բազմաթիվ վայրեր: Մարդիկ աղբը թափում են գետերի ու առուների հուների մեջ: Հաճախակի են նաև ուղղակի արտանետումները լճի մեջ: Գաղտնիք չէ, որ Սևանա լիճ կեղտաջրեր լցվում են բոլոր ավազաններից, որոնք ոչ պակաս վտանգ են ներկայացնում լճի համար[2]:

Իսկ Հայաստանում ինչ վիճակում է կենդանական աշխարհը: Ինչպես այլ երկրներում, մեզ մոտ ևս բնապահպանության կանոններին չհետեևելու հետևանքով բնությունից վերանում են շատ կենդանատեսակներ,որոնք գրանցվում են «Կարմիր գրքում» :

Կենդանիների Կարմիր գիրքը միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով: Տեսակների վիճակի գնահատումը և կատեգորիաների որոշումը իրականացվել է միջազգային չափորոշիչների հիման վրա՝ «Բնության պահպանության միջազգային միության» դասակարգիչների կիրառմամբ[9]:

Հայաստանի Կարմիր գիրքը ներառում է 153 տեսակի ողնաշարավոր կենդանիներ, որոնցից՝ ոսկրային ձկներ (7 տեսակ), երկկենցաղներ (2 տեսակ), սողուններ (19տեսակ), թռչուններ (96տեսակ)և կաթնասուններ (29 տեսակ): Ներառված են նաև 155 տեսակի անողնաշար կենդանիներ, այդ թվում՝ 16 տեսակի փորոտանիներ և 139 տեսակի միջատներ:

Անողնաշար կենդանիների ուսումնասիրությունը Հայաստանում բացահայտել է շուրջ 316 էնդեմիկ և 300-ից ավելի հազվագյուտ ու անհետացող տեսակներ: Հայաստանում հանդիպում են 53 տեսակի սողուններ, որոնցից շատերը Հայկական լեռնաշխարհի և կովկասյան ֆաունայի էնդեմիկներ են և վտանգված են: Չնայած թռչունների կազմում բացակայում են էնդեմիկ տեսակներ, սակայն թռչունների մի քանի տասնյակ կիսաանապատային ու ալպյան ձևեր գնահատվել են որպես կրիտիկական վիճակում գտնվող, վտանգված կամ խոցելի տեսակներ:

Կաթնասունների տեսակներից վեցը, իսկ ձկներից՝ 4-ը էնդեմիկներ են: Առավել վտանգված վիճակում են գտնվում ընձառյուծը, հայկական մուֆլոնը, բեզոարյան այծը, խայտաքիսը, ջրասամույրը, մանուլը և այլն[11]:

ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված ողնաշարավոր կենդանիների տեսակների քանակը՝ ըստ կարգաբանական խմբերի և հազվագյուտության կարգավիճակի[3]							
Կարգաբանական խումբ	Տեսակների ընդհանուր քանակը	Տեսակների քանակը					Տեսակների քանակը Միջազգային Կարմիր գրքում
		անհետացած	անհետացող	հազվագյուտ	կրճատվող	անորոշ	
Ձկներ	2		2	1			2
Երկկենցաղներ	1				1		
Սողուններ	11		6	4	1		7
Թռչուններ	67		20	34	13		3
Կաթնասուններ	18	2	3	6	6	3	1

Վերոհիշյալ փաստարկները խոսում են, միայն, այն մասին, որ օր օրի վատթարանում է բնության, կենդանակն աշխարհի կարգավիճակը, որին առաջնային նպաստում են մարդիկ: Այսպիսով, պետք է հասկանալ և ընդունել, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է և պատասխանատու է բնության պահպանման և ոչ թե վերացման այլ զարգացման համար[2]:

Եզրակացություն

Ամփոփելով ամբողջ աշխատանքը ՝ խոսեցինք երեխայի դաստիարակության, դրա մոտեցումների և տարբերակների մասին: Առանձնացրեցինք և ընդգծեցինք գրագետ կրթության դերի կարևորությունն ու նշանակությունը և որքան կարևոր է կրթական ոլորտում , բնապահպանության մասին դասերի առկայությունը: Բնությունը տիեզերքն է՝ իր բազմաբնույթ դրսևորումներով, որում ամեն բան սերտորեն կապված են միմյանց: Բնության մի մասնիկն է նաև մարդը, ով նույնպես կապված է շրջակա միջավայրի հետ: Այն մարդուն տալիս է այն ամենը, ինչ անհրաժեշտ է, և մարդն էլ իր հերթին պետք է ուշադրություն դարձնի նրա մաքրությանն ու պահպանմանը: Դրան կարելի է հասնել, եթե որպես զենք օգտագործվի կրթությունը հանուն կայուն զարգացման, որը կապահովի մարդկային հասարակության գոյատևումը բնական պայմանների ու պաշարների արդյունավետ օգտագործումը շրջակա միջավայրի որակի պահպանումը: Այդ կերպ էկոլոգիական մտածելակերպը կդառնա կենսակերպ և մշակույթ: Բնապահպանական կրթության գլխավոր խնդիրը շրջակա միջավայրի բնապահպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացումն է: Եվ ինչպես ասել է Յոհան Գյոթեն, բնությունը կատակներ չի ճանաչում, այն միշտ ճիշտ է, միշտ լուրջ, միշտ խիստ է. սխալներն ու թյուրիմացությունները գալիս են մարդուց:

Գրականության ցանկ

Անատոլի Սահակյան – «Մանկավարժական մտքի պատմություն» [1]

Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ.,Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Երևան, 2010 [2]

Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.,[3]

Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ[4]

Կ. Դանիելյան , Բ. Գաբրիելյան, Ս. Մինասյան, Լ. Չիլինգարյան, Հ. Մելքոնյան, Ա. Կարախանյան, Պ. Թոզալակյան, Ա. Վանյան, Գ. Փիրումյան, Է. Ղուկասյան, Լ. Սարգսյան- Սևանա լճի էկոլոգիական իրավիճակի ինտեգրալ գնահատումը (GEO Lake Sevan) ԵՐԵՎԱՆ-2011 [5]

Мария Монтессори самовоспитание и самообучение в начальной школе[6]

Мудрик А. В. Воспитание / гл. ред. Давыдов В. В. — Российская педагогическая энциклопедия[7]

Ильинский И. М. Об элитарном образовании [8]

Александрова О. А. Образование: доступность или качество — последствия выбора [9]

Павлов Д.С., Савваитова К.А., Соколов Л.И., Алексеев С.С. Редкие и исчезающие животные. Рыбы. М.: Высшая школа. 1994. [10]

anahit75.wordpress.com/2014/07/10/ /բնապահպանական-կրթությունը-դպրոցում/ [11]